

պատճառը, որ ընթերցարանը գտնվում է ոչ իր պատշաճ տեղում. կատարելապես հնարաւոր է հեռացնել այնտեղից ընթերցարանը մի ուրիշ աւելի յարմար անկիւն նոյն շինութեան մէջ: Ճշմարիտ է, դրա համար պէտք են ծախսեր, սակայն ոչ մեծ: Եթէ ժողովարանի վարչութիւնը կարող է տարեկան 30—40 հազարով երաժշտաների խումբ պահել, մեծ ամօթ է, եթէ նա չը կարողանայ իր ընթերցարանը վաճառել ցրտութեան մէջ պահել, ունենալով դրա համար առանձին սենեակ:

Ամենեւին հաճելի չէ կարող լինել ընթերցարանի հասարակութեան մասնով ընթերցարանն անունը կրող մի դահլիճ, ուր քաղաքական սեղանից երկու քայլ միայն հեռու պարզապէս կանանց սեղանների շուրջը «կենդանի յայտարարութիւններ», որոնք ստույգ են մտնողին պարոն, սխալվել էք, սա ընթերցարան չէ, այլ թուղթ խաղաղոյճների որջ... Դուք ստիպված էք ամեն րօպէ լսել այդ գարշելի յայտարարութիւնը և վերջի վերջոյ թեղել ու հեռանալ: Ականջ ունեցողները թող լսեն...

Շոքերը դեռ չեն սկսել, եղանակը հրաշալի է:

Սլաք

ՆԱՄԱԿ ԱՌԱՎՔԱՒԻՑ

Յունիսի 23-ին

Յունիսի 19-ին, Բաղուբիանի վրայով մեր քաղաքը ժամանեց թիֆլիսի նահանգապետ պ. Սվչինի երկրաչարժից փնտալածներին վերաբերող գործերով: Նահանգապետին ուղևորում էին նահանգական ճարտարապետ Բուտկելի, ինժեներ Մնտոնով, երիտասարդ ճարտարապետ Յովհաննէս Սիդանեան և այլ պաշտօնականներ: Դիմաւորներու էին գնացել գաւառապետ Ջրասերման և ուրիշ պաշտօնականներ, որոնք ուղևցել էին նահանգապետին՝ երկրաչարժից աւերված և փնտալած գիւղերը այցելելու ժամանակ:

Պ. Նահանգապետը այցելել է Իրախա, Մերենիա, Մեծ-Սամար, Բարալէթ և Արագոյա գիւղերը, իսկ պ. պ. Անտոնովին, Սիդանեանին և մի այլ պաշտօնակցի ուղարկել էր, որ այցելեն Բեժանո, Ազանա և Սիբի գիւղերը: Նահանգապետը դիտել է կործանված և փնտալած գիւղերը, վերաշինվելու կարօտ տները և այն տեղերը, ուր պէտք է շինվեն նոր գիւղերը: Յունիսի 19-ին, երկուցեան, այստեղ կալցաւ աղէտից փնտալածներին օգնող տեղական կոմիտեի նիստը, պ. Նահանգապետի ներկայութեամբ: Պարագմունքի աւարկաներն էին տեղական ժամանակաւոր հիւանդանոցը, փնտալած գիւղերի վար ու ցանքար, եղևրի ու կովերի բաշխումը և, գլխաւորապէս, անեւրի և նոր գիւղերի կառուցումը:

Միւս օրը, առաւօտեան, նահանգապետը այցելեց ժամանակաւոր հիւանդանոցը և գոհ մնաց իր տեսածից: Այդ հիւանդանոցը փակվում է յունիսի 1-ից, մնացած երեք հոգի հիւանդներն էլ պիտի փոխադրվեն Բարալէթ գիւղի հիւանդանոցը: Վնասված գիւղացիների համար առնված եղևրն ու կովերը բաժանվել են, բայց դեռ էլի պակասում են մօտ 40 եզ և 140 կով, որոնց լրացնելու մասին մտածում է տեղական կոմիտեան: Գիւղական շինութիւնների համար հարկաւոր գերանները և այլ փայտեղէնք ամբողջովին պատրաստ դարձած են Բաղուբիանում: Գիւղացիները իրանք

բեր գործը: Չարժուրելի է այս ժառանգական ախար մեզ մօտ Մերունի Մէլիք Սարգսին տապալելու ժամանակը հասել էր մեր մեծամիտ հայերի համար: «Խաչ հանիր, խաչ հանիր» աղաղակները լսվում էին թաւրիզի կառավարչապետի դռանը: Դա վերեւ յիշված քահանայի սեւ գործն էր: Նա էր ժողովրդի մէջ այդ խրատուններ և դժգոհութիւնների ցանցը: Մէլիքը ստիպված էր իր պաշտօնից հրժարուիլ: Կառավարչապետը պարտաստում էր մի նոր պարսիկ կամ քերթ կառավարչի նշանակել հայերի վրա: Արքայական հրովարտականքով վաւերացրված ինքնավարութիւնը ոչնչանալու վրա էր—մի բան, որին վաղուց էին պարսիկ և քերթ խաները սպասում: Արքայական ինքնավարութեան ժամանակը ընդհատվել էր կարող լինել պլանով: Կրթական այդ պահին հանդէս եկաւ Մէլիք-Սարգսի եղբոր որդի Մէլիք-Ջանախիբը: Ինչ գնով էլ լինէր, պէտք էր Քէյվանի հետ իրաւունքները պաշտպանել: Դա էր ահա այդ անյողողող մեղքի դէպքը: Նա հաւաքեց իր շուրջը մի քանի համախոհներ և բողոքեց թէհրան հայերի վրա քերթ և պարսիկ կառավարիչներ նշանակելու դէմ: Ներկայ ողորմած Մուղաֆֆէրէյդին Շահը

պէտք է սեփական սայլերով և նոր ստացած եղևրով կրեն իրանց տների համար հարկաւոր փայտը—Պէտք է շինվեն մօտ 4—500 տներ: Պարտաստված են զանազան մեծութեամբ տների յատակագծեր—5, 15, 25 հոլուց բաղկացած ընտանիքների համար: Մենք առիթ ունեցանք այդ յատակագծերից տեսնելու:

Այդ տները և այլ անսովոր շինութիւնները մեծ բարիք կը լինեն մեր գիւղացիներին համար: Ամեն մի գիւղի շինութիւնների համար երկու վարպետ կը բերվեն թիֆլիսից, և այդ երկու գլխաւոր վարպետների ձեռքի տակ և նրանց առաջնորդութեամբ կաշիտանց գիւղական, մեծ մասամբ ինքնուս, վարպետները—որմնադիր կամ հիւան, իսկ գիւղերի, փողոցների և առանձին շինութիւնների յատակագծերի որոշելը և աշխատանքների գլխաւոր հսկողութիւնը յանձնված է պ. Յովհաննէս Սիդանեանին, որ նոր է աւարտել քաղաքային ինժեներների ինստիտուտը: Այդ նպատակով երիտասարդ ճարտարապետը պէտք է երեք ամիս ապրէ Բարալէթում և չըջապէ գիւղերը: Ճարտարապետի ընտրութիւնը աջող պէտք է համարել այն տեսակետից, որ նա թէ լեզուն գիտէ և թէ ժողովրդին է ճանաչում: Մտապայասել, որ նահանգապետը կարգադրեց, որ քաղաքի ազատ փնտալածներին էլ օգնութիւն հասցնելի տները վերանորոգելու:

Աւելորդ չեն համարում հազարդել, որ պ. Նահանգապետը մեծ քանակութեամբ ինժեներներ է ընդունել թէ գաւառում և թէ քաղաքում: Միւս օրը, յունիսի 20-ին, նահանգապետը Ալեքսանդրապոլի վրայով ճանապարհ ընկաւ թիֆլիս: Սալիւսեան

ՆԱՄԱԿ ԱՌԱՎՔԱՒԻՑ

Յունիսի 12-ին

Մեր և մայրաքաղաքի պարբերական մամուլի էջերում յաճախ երևան են գալիս մի շարք գանձառներ, բողոքներ, թէ մենք չենք կարողանում օգտվել մեր երկրի ընտնական շնորհած բարիքներից: Թէ մեր կուրորաները գիւղերի ընտնական չեն ներկայացնում, թէ կովկասեան կուրորաների վրա քիչ ինչում է լինում, այլապէս նրանք գերադաս կը լինէին արտասահմանեան կուրորաներից: Յիրաւի, բաւական է մի թուուցիկ համեմատութիւն, տեսնելու համար թէ որքան արդարացի, ճիշդ հիմք ունեն այդ բողոքները:

Անցելու նամակով, Աբասթումանի բնակարանների առիթով, մենք երկու խօսք էինք ասել: Այժմ տեսնենք, թէ որքան յարմարութիւններ ունեն վիթխարի սօսի և եղևրի անստանդարտ շրջապատված Աբասթումանի զբոսավայրերը:

Յայտնի է, որ թէ հիւանդների և թէ առողջների թափերի մարդութեան և օրգանիզմի անբարանց համար որքան անհրաժեշտ են լեռնային զբօսանքները, էքսկուրսիաները: Մեզ մօտ, Աբասթումանում, անկարելի է այդպիսի զբօսանք կատարել, առանց ատողութիւնը վտանգի ենթարկելու, որովհետեւ գոյութիւն ունեցող ծառուղիները, լեռնային ճանապարհները այնքան անհարթ, գաղիվոր, զիջ են շինված, որ մի լեռան գագաթ բարձրանալիս անհնար է, որ չը յոբնէք, չնշտութիւնը չա-

իր հանգուցեալ հօր մարդասէր օրինակին հետեւելով, մի նոր հրովարտակով վերահաստատեց Քէյվանի ինքնավարութիւնը: Այդ նոր հրովարտակի համաձայն հայերը իրաւունք ստացան շարժ աքսարիաթով (ձայնից առաւելութեամբ) ընտրել իրանց համար մի մէլիք: Այդ փառաւոր յաղթանակի դէմ խոչընդոտներ չատ եղան. բայց Շահի կառավարութիւնը անսովոր հետևողականութեամբ չը խախտեց Քէյվանին տրված այդ բազմամեայ իրաւունքը: Մէլիք-Ջանախիբը կառավարութեան կողմից և հայերի համաձայնութեամբ նշանակվեց կառավարիչ Քէյվանի վրա: Նորընտիր Մէլիքը վայելում է պարսից այժմեան թագաժառանգի բարձրագոյն հովանաբորութիւնը և համար կրանքը: Վերջերս շնորհել է նրան «Երեմիան» կառավարչի պաշտօնը և քանչևնք Մէլիք Ջանախիբին վերջապէս աջողվեց անցնել տարի զնել քերթ և պարսիկ կառավարչներից այդ հայաբնակ գաւառի ընդարձակ կալուածքները: Այդպիսով վճռականապէս վերջ դրվեց քերթ խաների դարաւոր «ժողովարարութեանը»:

Քէյվանցի հայերի կրած նեղութիւնների գլխաւոր պատճառը պիտի որոնել այն «քերթ վայական» կապերի մէջ, որոնք յաճախ ասելի

րագացնէք, չը քրտնէք, երեւոյթներ, որոնք շատ վատ են աչրում հիւանդի վրա: Բայց այդ, յնարաններ ունեցող նստաբանների կատարել սով է տիրում. եղածները սակաւ են իրարից շատ հեռու: Անհրաժեշտ է ճանապարհների վրա շինել գոնէ մի քանի տանիքաւոր պաւիլիօններ՝ անձրեւից պաշտպանվելու համար: Թերեւս նախկին սարիներում, հանգուցեալ Մեծ Իշխանի օրերում, այդ ճանապարհները աւելի նախանձելի դրութեան մէջ են եղել, իսկ այժմ շատ խարխուլ վիճակի մէջ են գտնվում, ու եղած մի շուխա երկու կենսա նստաբաններն էլ վիչացած են:

Կ. Տ.-Յ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կովկասեան կառավարչապետ իշխան Գոյիցին երէկ առաւօտեան Բագուի գնացքով ժամանեց թիֆլիս: Լրագիրները հաղորդում են, որ յունիսի 20-ին նա բաղը ունեցաւ ներկայանալու թագաւոր կայսրին:

Սեւ ծովի արեւելեան ափին գտնվող պետական հողերը մինչև այժմ կտոր-կտոր տրվում էին գանազան անձանց այգեգործութիւն և ուրիշ կուրտուրա զարգացնելու նպատակով: Այժմ երկրագործութեան միջխտրութիւնը յայտնում է, որ այսուհետեւ այլ ևս ոչ ոքի հող չը պէտք է տրվի, ուստի և թող չը դիմեն միջխտրութեանը այդ տեսակ խնդրերներով:

Կին բժիշկներին այսուհետեւ թոյլ է տրվում, որ նրանք պաշտօններ ստանան իգական գիմնադրանքում և ուրիշ զարգանքներում, նոյնպէս կանանց բարեգործական հիմնարկութիւնների մէջ: Այդ կին-բժիշկները տղամարդ բժիշկների հետ հաւասար իրաւունք ունեն վայելել պետական ծառայութեան տուած արտօնութիւնները, միայն մի բացառութեամբ, որ չը պէտք է ստանան ծառայութեան աստիճաններ համազգեստներով և պարգևներ:

Վանեցի մի լանասէր, «Արեւելք» ասելով, իրաւի է քէյիլի Լուսեան, ձեռնարկել է գրելու Աղթամարի կաթողիկոսների պատմութիւնը: Լուսեան իր տրամադրութեան տակ ունեցել է յիշատակարանների ձեռնարկ: Շուտով պիտի աւարտվի այդ ստուար գործը, որ նիւթ կարող է ծառայել հայ եկեղեցու պատմութեան համար:

Պետերբուրգից, յունիսի 24-ին «РУСС. ВѢД.» լրագրին հետագրում են. «Երէկ բորայում լուր տարածվեց, թէ բոլոր զեպպանիքը և զեպպանատան պաշտօնականները, որոնց թուում միւսը լիքը շիշ: հարուած է ստանում գլխից: երկուսն էլ ծանր վիրաւորված են: Մի երկու շաբաթ արանից առաջ Սալթաղ գիւղում օրը ցերեկով սպանում են մի թուրքի: Ազա գիւղում հայր ու որդի շարունակ թթնուտ տերեւ են դողանում եղև մի պարտի թթնանում: մի գեղեցիկ օր նրանք բռնվում են և արքանաւորի մի հարուածով հայրը սպանվում է: Շերա մի որդիի համար թթի տերեւ գողանալը նախընտանում մեծ չարիքով է կատարվում և սովորութիւն է դարձել:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են յունիսի 25-ից. «Այսօր Վեհափառ կաթողիկոսի կարգադրութեան համաձայն, Արսէն վարդապետ Ղլտունեան բոլոր եկեղեցիների ծխականներին հրաւիրել էր իրանց եկեղեցիները, որպէս զի պատգամաւոր ընտրեն, հոգաբարձական ընտրութիւն կատարելու համար: Այդ օրը գրեթէ ոչ մի եկեղեցու ընտրութիւն չը կայացաւ, շնոր-

են ունենում հայերի և քրդերի միջև: Քերթի երկխան թիփաւում է հայի գոգի մէջ կամ ծունկի վրա և այդպիսով ծագում է «քերթայութիւն» (քաւորութիւն) հայի և քերթի միջև: Թէ ինչ արժէք ունի քերթի «քերթայական» յարաբերութիւնը հայի հետ, այդ նշտ է հասկանալ: Օրինակ՝ քերթ քերթական այցելում է իր հայ քերթային, ուսում, խումբ և այլա տուն վերադառնալիս հանգից գողանում է զեպպուր գիւղացիների եղև ու ոչնչարը: Այդ է լինում քերթ «քերթայի գիշերասն» Գուցէ հարցնեն թէ ինչու պէտք է հայը քերթայանայ քերթի հետ, քանի որ դա յայտնի լինա է բերում թէ իրան և թէ ուրիշներն: Ահա թէ ինչու նա աւազակաբարոյ քերթ քերթային գործ է անում իրրեւ «ղոյշմաղ» *) իր հակառակորդ համազգեւացիների դէմ: Մէլի օրինակն հետեւում է միւսը: Ով որ կամենում է հասարակ գիւղացիութիւնից ճանապարհանալ (ազգեցիկ) դերքի համակ, աշխատում է ինչքան կարելի է զօրաւոր քերթերի հետ քերթայական կապեր հաստատել: Ահա մի սովորական շարիք, որի առաջը պէտք է աւելել

*) Քառայի նշանակում է փաւոր ձեռին, այսինքն պաշտպան, նիզակակից:

հիւ ծխականների անտարբերութեան. իրաւաբանիչ եկեղեցու հաւաքիլ էին 75, 60 կամ 30 ծխականներ, որով չէր լրանում ծխականների 1/3 մասը, ուստի և չէր կարող ընտրութիւն կայանալ: Արսէն վարդապետ Ղաւանցեցոյ եկեղեցու ծխականներին խիստ նախատեց, սակով թէ գուցէ մինչև այսօր փոփոցներում, լրագիրներում խօսում, բողոքում էիք, թէ տուէք մեզ իրաւունք. այժմ յարգված է ձեր խնդիրը, ինչու չէք բարեհաճում եկեղեցի գալ և ձեր զարոյցի մասին մտածել: Նա շատ վրդովված խօսեց, մինչև անգամ սուսացաւ, որ եկեղեցու մէջ է, որ ժողովրդի մասը է խօսում և սակայն ժողովուրդը մինչև այսօր զօղափար չունի ընտրութեան մասին. նա դեռ չէ հասկանում հարցն ինչու մէջ, նա կարծում է թէ առանց իրան էլ կարող են մի հոգաբարձուի փոխել և մի այլ մարդու հոգաբարձու նշանակել: Առանց ժողովրդին ծառայում տալու, առանց Վեհափառի կոնգրակը եկեղեցիներում կարգաւոր, պահանջել, որ ծխականների 1/3 մասը հրաւիրված օրը ճիշդ ժամին ներկայ լինել, եկեղեցու, այսպէս էր զբոլված գործը այս անգամ և գրա համար էլ այդ օրը հաւաքվել էին եկեղեցիներում նրանք, որոնք միայն լրագրութիւնից տեղեկութիւն ունէին, որ հոգաբարձուներին նախկին իրաւունքները տրվում է, առանց հաստատաւորութիւն տեղեկութիւն ունենալու:

ԼԱՆՁՈՒՆԻԹԻ գիւղից մեզ գրում են. «Այս գիւղը ունի ճրի գրադարան-ընթերցարան, որ բացված է մի բուն երիտասարդների եռանդուն աշխատանքով: Առ այժմ գրադարան-ընթերցարանը զեպպանում է մի փոքրիկ տնակի մէջ: կազմակերպողները մտադիր են գնել առանձին շինութիւն, որպէս զի ժողովուրդը ամեն մի յարմարութիւն ունենայ: Գիւղն ունի և երկրասեան զարոյց, որտեղ ուսանում են ամբողջ Լանչուեթի տղաներն ու աղջիկները:

Հին-ՆԱԽԻՋԵՆԻՑԻ մեզ գրում են. «Սպանութեան և գողութեան դէպքերը համեմատաբար շատացել են: Անցեալ գիշեր անյայտ մարդիկ մտնում են պ. Բ. Մ.-Բ.-ի ննջարանը և բրքերով նրա գրպանը, տանում են մօտ 50—60 բուլբու: Նոյն գիշերը երգիկից ներս են սողում հայ հայթիկի Դ. Գ.-ի լսանքը և զարկից տանում 48 բուլբու: Մուսնում են և ուրիշ երկու հարուստի տուն սակայն տանցիկը զարթնում են և նրանց չէ աշողովում բան տանել: Երէկ Ե. Գ.-ի գինեամար մի քանի հայ երիտասարդներ բազում երկրագեղիւ լուրջ կոբէ և տեղի ունենում: միմիայն կարգին շնքսուց յետոյ, մէկը արձանակի վէրք է ստանում ազդրից, իսկ միւսը լիքը շիշ: հարուած է ստանում գլխից: երկուսն էլ ծանր վիրաւորված են: Մի երկու շաբաթ արանից առաջ Սալթաղ գիւղում օրը ցերեկով սպանում են մի թուրքի: Ազա գիւղում հայր ու որդի շարունակ թթնուտ տերեւ են դողանում եղև մի պարտի թթնանում: մի գեղեցիկ օր նրանք բռնվում են և արքանաւորի մի հարուածով հայրը սպանվում է: Շերա մի որդիի համար թթի տերեւ գողանալը նախընտանում մեծ չարիքով է կատարվում և սովորութիւն է դարձել:

Մէլիք-Ջանախիբը իր հօրեղբայր Մէլիք-Սարգսի համերաշխութեամբ աշխատում է այդ ցաւի զարման անել: Յանկալի էր, որ այդ երկուսի հետ Ատրպատականի առաջնորդն էլ բարձրացնէր իր աղբյուրի ձայնը և մանաւանդ աջակցէր Մէլիքին մի երկու հոգի անհասնելու խտովարարներին զպակու գործում թող թաւրիզի մեր պ. պ. հոգաբարձուները, որոնք ընդհանրապէս անտեղեկ են Քէյվանի ներքին գործերից, չը հաւատան այդ տեսակ ազէտ գիւղացիների կողորդութեան արտասունքներին և անտեղի գանգառներին: նրանց պէտք է հասկանալ, թէ բարորութիւնը և իս աղաղ կենանքը կայնված է միմիայն իրանց միաբանութիւնից և հաւաքական ոյժից: Վերջացնում են ասելիքս հաղորդելով, որ Մէլիք-Ջանախիբը անցեալ տարվանից սկսել է առաջնորդի աջակցութեամբ հիմք դնել մի ուսումնարանի Քէյվանում: Մաղթում ենք կատարեալ աջողութիւն այդ ձեռնարկութեանը: Ժամանակ է, որ մեր թաւրիզի և այլ տեղերի բարեբարները հասկանան, որ Քէյվանի միակ վերկութեան միջոցն է ուսումնարանը: Առանց դրան կը քայքայվի այդ ժողովուրդը:

Ա. Մ. Զ.

ԱՆՁՈՒԹԻ գիւղից մեզ գրում են. «Լանչ-լուսի Գուրխայի գիւղերից մէկն է: Մայիսի վերջերքին, երբ սկսում է շերամի բուսածովի ժողովելու ժամանակը, առուտուրը սկսում է եռալ մի ամսայ չափ, չորսիւ Բաթումից եկած վաճառականները, որոնք մեծ մասամբ հայեր են, եւ ունեն այստեղ առանձին յարմարութիւններ, ժողովում են այստեղից եւ չրջակայքից բոծօք, եւ ապա ուղարկում արտասահման Գիւղի ունի յարմարութիւններ շերամ պահելու համար, բայց տեղայինները դեռ լաւ չեն ըմբռնել թէ ինչպէս պէտք է պահել, չը նայած որ հունդ բաժանողները ամեն ինչ մանրամասն բացատրում են: Շերամը պահում են կանաչք, իսկ աղամարդիկ համարեա չեն խառնում: Գիւղից հինները մի փոքրիկ սենյակում պահում են 10 միակ հունդ, սենյակը բաժանում են 4-6 կարգի, այդ կարգերի վրա փռում են եղէգներ եւ դրա վրա պահում շերամը: Այդ փոքրիկ սենյակը նոյն իսկ չէ ունենում առանձին օդանցքներ, բայց մի դռնից, որը այն ժամանակ է բացվում, երբ վրացի կինը կամ աղջիկը գրեւորում է տերեւ տալու: Անա այդ եղանակով պահելու պատճառով է, որ փոխանակ 10 միակայից ամենաքիչը 5 պուգ ստանալու, ստանում են 3 ֆունտից մինչեւ 1 պուգ բոծօ: Չը նայած արտասահմաններ ընկած գներին, վաճառականները սկսեցին գնել բոծօք նախ 13-14 ր. պուգը եւ ապա երբ սկսեց վերջանալ, միանգամայն բարձրացրին մինչեւ 16 բուգը: Այս տարի շերամը մեծ մասամբ վնասվել էր, այնպէս որ ամենայն կերպով վերջացաւ բոծօք: Մեծ վաճառականները հազիւ կարողացան գնել 500-1000 պուգ, այն ինչ անցակ տարի իւրաքանչիւրը կրկնապատիկն էր գնելը:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

«Nineteenth Century» ամսագրի նոր լուստեւած յուլիսի տեսարկում էջերի Նորման քրեւնութեան է քննարկում Անգլիայի արտոգլ նախնիքից քաղաքականութիւնը Չինաստանում: Նա հաստատում է, որ մինչեւ այժմ անգլիացիները իսկապէս չեն ունեցել որ եւ է որոշ քաղաքական պոզիցիան, եւ զեկակարգում էին միայն նրանով, ինչ որ թելագործ էին օրվայ անցքերը Նորման ասում է, որ Միացեալ Չինաստան գոյութիւն չունի: Մենք ստուր ենք խօսել «Չինաստանի եւ չինական ժողովրդի» մասին, որպէս որոշ հասկացողութիւնների մասին, եւ դրա մէջն է կայանում շատ տարածաշրջանների պատճառը: Այն, ինչ որ քարտէզներ վրա Չինաստան է անուանում, իսկապէս ներկայացնում է մի չարք չըջաններ, որոնք անջատված են միմեանցից ու կենտրոնից մեծ տարածութիւններով, ունեն տարբեր կլիմայ, ազգաբնակչութիւնները զանազանում են թէ յեղով, թէ կլիմայով, թէ լեզուով: 30 միլիոն մահմետականները նայում են բուդդայականների վրա, որպէս անաստուած օտարերկրացիների վրա, բայց մինչեւ անգամ կենտրոնական եւ հիւսիսային նահանգների ազգաբնակչութիւնը համարեա իր երկրացիներ չէ համարում հարուարեւելեան չըջանների չինացիներին: Այդ պատճառով շատ հեշտ է մի տեղի չինացիներին կուսեցնել ուրիշ տեղի չինացիների հետ:

«Neue Freie Presse» լրագրի թղթակիցը հարգում է, որ Բելգիայի չինական դեսպանութիւնը ոչինչ տեղեկութիւններ չունի իր կառավարութիւնից եւ որ, զեկապսի կարծիքով, այնտեղ անխիստութիւն է տրեւում: Դեպքանք թղթակիցն է ասում հարաւորութիւն, որ պրինց Տուան տիրել է դահին, որովհետեւ նա մի փոքր իրաւունք ունի գահը ժառանգելու: Բանը այն է, որ Տուանցի կայսրի մահից յետոյ մնացին կայսրական եօթ պրինցներ եւ իր կտակի մէջ Տուանցի թագաժառանգ նշանակեց հինգ զերբորդ պրինցը: Սինգապուր խորհրդի կառավարի փոխելով «չորբորդով» եւ զահ բարձրացաւ Տուան կարելի է, որ պրինց Տուանը օգուտ կը քաղի ներկայ խառնակութիւններից զահը բարձրանալու համար:

Տասերին հետաքրքրում է այն հարցը, թէ կարող է արդեօք Անգլիան էլի զօրքեր ուղարկել Չինաստան: Այդ առիթով կարկաթայից հարգում են, որ Հնդկաստանում պարտաւ եւ հնդկական զօրքերի մի ամբողջ զիվիզիա Չինաստան ուղարկելու համար: Սիպայների զիվիզիան, որ եւրոպական ձեւով է վարժված

եւ զինուորված է մազադինային հրացաններով, բաղկացած է 6000 հետեւակ զօրքից եւ 2000 հեծելազօրքից: 18 թնդամիսներով թէպէս եւ սիպայները չեն կարող հաւասարվել եւրոպական զօրքերին, բայց նրանք յամենայն դէպս աւելի լաւ են չինական զօրքերից: Բացի այդ զիվիզիայից Անգլիան կարող էր Հնդկաստանից էլի զօրքեր ուղարկել Չինաստան, բայց ներկայումս այդ բանը դժուար է այն պատճառով, որ այժմ կատարվում է նրանց զինափոխումը: Թիւրքը, եւ այդ կատարվում է շատ դանդաղ, որովհետեւ բոլոր զէնքերը եւ վառոցը պատրաստվում են Անգլիայում:

ՆԱՄՍԱԿ ԵՎԷՅՏԱՐԻՍՅՈՑ

Ժընէվ, յունիսի 30-ին
Հէլվէտեան լրագիրները համակրական յօդուածներ նուիրեցին տիկին Գլադստոնի յիշատակին, որի ժանկան լուրը դուք արդէն ստացած պիտի լինէք:

Երեւի անգլիական հրատարակութիւնները շուտով մանրամասն կենսագրութիւններ կը տպագրեն այն կնոջ մասին, որի անունը մօտ կէս դար անբաժանելի կերպով կապված էր նշանաւոր պետական գործիչի անունն հետ: Սակայն կայ մի գիծ, մի կէտ, որը շատ զգալի կերպով աչքի է ընկնում եւ առանց այդ մանրամասն կենսագրութիւնների, մի գիծ, որի վրա միաբերան չկայեցին եւ չլէցարական հրատարակութիւնները: Դա այն է, որ տիկին Գլադստոն իր ամուսնական կեանքի երկար տեւողութեան ընթացքում միմիայն իր մարդու ամուսնինը չէր, այս բառի սովորական մտքով, այլ եւ նրա գործունէութեան ֆանատիկոս համակրողը: Նրա աշխատանքների անբաժան ընկերը, վերջապէս նրան ոգեւորող եւ նրան զրբողը:

Դա ուշագրաւ մի գիծ է, որի առիթով անտեղի չը պիտի լինի մի քանի խօսք տակը: Դա, եթէ կամենում էք, այն հինական գիծն է, որը բաժանում է եւրոպացի եւ ասիացի կնոջը: Ոչ միայն տիկին Գլադստոն, որը յամենայն դէպս աչքի ընկնող առաջնութիւնների տէր պիտի համարվի իր համեստութեան մէջ, այլ նոյն իսկ շատ սովորական կանայք, այստեղ ժընէվում, ինչպէս այդ նկատելի է անցողակի ուսումնասիրութեան ժամանակ իսկ, հանդիսանում են ինչպէս այն գլխաւոր հնոցը, որտեղ ամուսինը՝ իբրեւ հասարակական գործիչ, իբրեւ գրող, իբրեւ պետական մարդ, իբրեւ որ եւ է իրասկզբութեան զեկակարգ, զըտնում է նիւթ իր եռանդի, իր աշխատանքի անբնդատ տեւողականութեան, իր ոգեւորութեան համար: Տիկին Գլադստոն ամենից առաջ իր ամուսնու գաղափարների ամենաջերմ, ամենապայքի կերպագուցում էր: Այդպէս է եւրոպացի կինը: Տիկին Գլադստոն իր ամուսնու մտածունքները ամենամանրաւոր արձագանքատուն էր. նա հետեւում էր ամուսնու ամեն մի քայլին, նրա հետ միասին էր ոչ միայն Հօլլանդիան, այլ եւ պարլամենտում, նրա պետական բոլոր ճանապարհորդութիւնների ժամանակ, ոչ միայն իբրեւ կին, այլ եւ իբրեւ համակրող, խորհրդակցական, լինումով եւ յուսանատութեան քայլերով: Հաստատուած ոգեւորող: Այդպէս է եւրոպացի կրթված կինը: Եւ դրա կենդանի օրինակները ամեն մի քայլափոխում կարելի է նկատել, կրկնում եւ, եւ ժընէվում, ուր կինը, չորսիւ այդ յատկութեան շատ խոշոր դեր է կատարում ոչ միայն ընտանեկան կեանքի սահմաններում, այլ եւ իր հայրենիքի ընթացիկ կեանքի զանազան ճիւղերում, իբրեւ տղամարդուն զրբող եւ խրախուսող:

Կարող էք այդ երեւոյթը գտնել արեւելքի կնոջ, կամ նոյն իսկ հայ կնոջ մէջ, որ իրան նկատված է համարում քաղաքակրթութեան զրկելու Դժուար: Հետաքրքրվեցէք հայոց կնոջ թէ նոր գործիչները, գրողները, հայոց մարտաւր մշակների ընտանեկան կեանքով, եւ դուք, շատ քիչ բացատրութեամբ, կը նկատէք, որ հայ գործողը, հայ գրողը, հայ մտածողը, հայ արուեստագէտը, վերջապէս քաղաքական հայ գործիչը ոչ մի տեղ գուցէ այնքան անտարբերութեան չէ հանդիսւում, որքան այն անձնաւորութեան մէջ, որ «Ժամկից» անունով անվ իր կեանքի անբաժան ընկերն է դարձել: Ոչ միայն անկիրթ հայուհին, այլ եւ այն հայուհիները, որոնք որոշ մտաւոր ցեղով ունեն, դեռ չեն հասել այն բարձրութեան, որտեղ կրթութիւնները փակ չըջանելը, զանուած է իր մարդու աշխատակիցը եւ նրան ոգեւորող ոչ միայն անային հայուհիների եւ կամ երեխաների կրթութեան հարցում, այլ եւ այն ընդհանուր,

արձր, բուն հասարակական հարցերում, որոնք կազմում են մարդ-ամուսնու իրէպար, նրա գաղափարական կեանքը: Ամուսինը հասարակական գործիչ է, կինն այդ չէ ուզում իմաստալ եւ յաճախ նոյն իսկ ծաղրում էլ է: Ամուսինը գրող է, կինը ոչ միայն չէ համարում, այլ չը գիտէ էլ թէ ինչ է գրում նա: Ամուսինը նկատված է որ եւ է ընթացիկ հասարակական գործի երեքուն ալիքների մէջ, կինը ոչ միայն չէ խրախուսում, այլ ամեն օր եւ ամեն դէպքում նրա վրա սատը ջուր է անում, նրան յետ է կանգնեցնում: Ինչ է մտածում ամուսինը, ինչ մտքեր են մաշում, նրա ուղեքը—այդ չը գիտէ կինը: Նա ուրիշ մտածունքներ ունի: Դրա մի գեղեցիկ օրինակը տեսաք ֆրանսիական մի փոքրիկ, բայց սիրուն գրուածքի մէջ: Տան հայրը՝ գրող է, հոշակաւոր մարդ: Կինը՝ սովորական մի թեթեւամտ եւ մի օր, երբ գրողը՝ առանձնացած իր գրասենեակում՝ իր ամբողջ միտքն ու ուղիքը գրում էր թղթի վրա, թեւաւորված իր բարձր մտածունքների աշխարհում, նոյն այդ քայլին ներս է վազում կինը՝ հրամայական շեշտը չըթուցնելով—«վեր կաց, շուտ, շուտ, Ժօրթի համար փ ա փ ու ճ ն եր աննելու պիտի գնանք...»:

Այդ առանց մարդու՝ «փափուճ» աննելու անգամ անընդունակ կանանց չըջանն է, որ կազմում է այն ս ա ո յ ա ռ ա ն, ուր յաճախ խեղդվում, չորանում, մեռնում է ամեն մի կոտորած, ոգեւորութիւն եւ յափշտակութեան ամեն մի սաղմ: Այդպէս չէր տիկին Գլադստոն: Եւ դրա համար էլ գովում է նրան իր հայրենիքը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Daily Mail» լրագրին Շանգհայից հեռագրում են, որ բուժանգրականները յոյս ունէին, որ 8 միլիոն կողմակիցներ կունենան: Մօտաւորապէս հաշուած են 3 միլիոն չինացիներ, որ զէնք են առել Պէչիլեան նահանգում, Իւսանում եւ Շանգհայում:

Լոնդոնի լրագիրներին հարցրում են Շանգհայից, յունիսի 20-ից, որ չինական աղբիւրից ստացված տեղեկութիւնների համեմատ, Պէչիլեում ոչ մի օտարագրի չը մնայ: Ասում են, որ անգլիական դեսպանատունը լցված է մեռելներով եւ վիրաստործներով:

Իրաւք գիտեց պետութիւններին մի բողբոջով այն բանի առիթով, թէ իշխանութիւնները Կրէտում հոգ չեն տանում մահմետական ազգաբնակչութեան կեանքը եւ գոյքը պահպանելու համար: Բ. Դուրը մանաւանդ մտանցոյց է անում երկու դէպքի վրա, այն է մահմետական սպանութիւնը Բէարմիոսում, որի մէջ կասկածվում է մի զբիտոնեայ, բայց յանցաւորը մինչեւ այժմ էլ անյայտ է մնացել, եւ մի ջահիլ թիւրքունու հասցրած վիրաստործները փողոցում մի ջահիլ կրետացի կողմից: Կրետացի դրա համար բանտարկութեան դատաւարութիւնը: Օտար պետութիւնների զեկապսները Կ. Պոլսում այդ առիթով քննութիւն կատարեցին իրանց հիւպատոսների ձեռքով կանչեցրած, եւ հիւպատոսներից ստացված զեկուցումների հիման վրա՝ պատասխանեցին Բ. Դուրան, թէ նրա արած բողբոջ հիմք չունի, որովհետեւ մահմետականների անձնաստորութիւնը եւ գոյքը Կրէտում վայելում են օրինական հովանաւորութեան: Այդ պատասխանն ուղարկվեց նոյնպէս արքայադրդի Գէօրգիին: Սակայն, մահմետականների գաղթը շարունակվում է, եւ Բ. Դուրան առաջվան պէս շարունակում է պաշտպանել այդ շարժումը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԷՑ

28 յունիսի
ՊեՏԵՐՆՈՒՐԳ ԅունիսի 28-ին, Յեւաքելիչ Գէօրգի Ալեքսանդրովիչի ժանկան տարեդարձին, Պետրոպոլիսի տաճարում հոգեհանգիստ կատարվեց Բարձրագոյն ներկայութեամբ: ՊԱՐԻՉ: Գաղաքային խորհուրդն ընդունեց այսօր բոլորների պատուիրակներին:

Պատգամաւորների ժողովը՝ Վարչէկ-Ռուսո կարգաց հրովարտակ նստաշրջանը փակելու մասին: Ամբողջ ձախակողմը ոտի կանգնեց ի պատիւ հանրապետութեան բացազանչութիւններով:

Սկստւոք միաձայն ընդունեց Չինաստանի արշաւանքի համար պահանջված կրէդիտը եւ կօֆէի վրա մաքսահարկը պակասեցնելու նախադիւր: Մօնիս կարգաց հրովարտակ նստաշրջանը փակելու մասին:

ԲԵՐԼԻՆ: Տեանձինի գերմանական հիւպատոսից այստեղ ստացված տեղեկութիւնների համեմատ, չինացիները յաճախ ուղակիւմ են

այնտեղի օտարագրի բնակութիւնները: Յունիսի 23-ին «Լեւ ըսուցիք» 2000 մարդիկ, որոնք յարձակվեցին ֆրանսիական բնակութեան վրա, յետ մղվեցին ուսանիցի: Յունիսի 24-ին անգլիացիները եւ ետալոնացիները կրակ էին թափում չինական բաւարեյանների վրա: Երեկոյան չինացիները առմեր արձակեցին գերմանական հիւպատոսի թանիքի վրա եւ հրդեհեցին նրան: Կրակն իսկոյն հանգրվեց, փոքր վնաս պատճառելով:

Պէչուանգ չոգենաւը գերմանական վիրաստործներով յունիսի 23-ին գնաց Տակու: Ջրային ճանապարհը Տակուի եւ Տեանձինի միջեւ ապահովված է: Երկաթուղին Տակուի եւ Տեանձինի միջեւ ամբողջապէս վերականգնված է, բայց վերջին երէք մղոնից դէպի Տեանձին:

Այստեղ այրող օտարագրիների համարեա բոլոր ընտանիքները ճանապարհ ընկան Տակու դեռ յունիսի 21-ին:

ԲԵՐԼԻՆ: Գերմանիայի դիպլոմատական ներկայացուցիչ Չինաստանում նշանակվում է Լեւիսէնբուրգի զեսպան Ֆոն-Մունմ:

ՊԱՐԻՉ: Չինական դեսպան տեղեկացրեց Դէլիսէին, որ Լիխունգչանգ հեռագրում է իրան Կանտոնից, թէ նա Պէչիլեից յունիսի 27-ից հեռագիր է ստացել, որ զեսպանատները չըջապատող զինուորները եւ ապատամները կամայ կամայ չըլուծ են:

ՎԻՆՆԻՍՏԱՅԷՆ: Առաւօտեան ճանապարհ ընկաւ չինական նաւատորմը:

ԲԵՐԼԻՆ: Ջիֆուի գերմանական հիւպատոսը հարցրում է, որ շանդունեան նահանգապետը հեռագիր ուղարկեց Ջիֆուի օտարագրի հիւպատոսներին, որի մէջ ասված է, թէ յունիսի 21-ից ստացված տեղեկութիւնների համեմատ, զեսպանները Պէչիլեում անվտանգ են: Ապըստամբութիւնը բոտ երեւոյթին թուլանում է: Բոլոր կաթօլիկ եւ աւետարանական միսիօնէրները ճանապարհ ընկան Ջիֆու կամ Տիլիստու:

ՍԷՈՒՆ, ԱՆՈՒՊՈՐՈՒՆՈՒՐ հեռագրակցը կարված է: Չէմուլպոից ժամանակաւոր հարորդակցութիւն է հաստատված Տակուի եւ Ջիֆուի հետ:

ՇԱՆԳՀԱՅ: Ստացված է պրինց Տո անի հրովարտակի օրինակը, որի մէջ նա իրան կայսր է անուանում:

ՄԻՄԼԱ: Նկատվում է աստիկ խօլբային հիւանդութիւն Կօխաստում, որտեղից նորեւս մի դուռը գնաց Չինաստան: Անցեալ շաբաթը 207 հիւանդացողներ կային, որոնցից 77 մեռան:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Ամէրիկական զօրքերն ուժեղացնելու համար Չինաստան կերթայ 6000 զօրք: Ֆիլիպեան կղզիներից: Կուրպուտ կազապովն երէք դիւրեր, որոնք պէտք է գնան կամ Ֆիլիպեան կղզիները կամ Չինաստան:

ՊԱՐԻՉ: Հաստատվում է, որ ֆրանսիական զօրքերի հրամանատար կը լինի գեներալ Վուաբոն, Բալիւի եւ Ֆրէէմի հետ, որպէս զիվիզիայի գեներալներ, իսկ փոխ-ժողապետ Պօտիէ ժողային ոյժերի հրամանատար կը լինի:

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆԷՐ ԵՎ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ՆՈՒՆԱԿԱՆՁԵՄԱՆ, Ն. ք. Բ. Մենք երբէք չենք տըպագրել հերքում ձեր լիշտ թերթի դէմ եւ չենք կարող ձեզ համար բացատրութիւն անել:

ՎԱՍԻՍՏԱՅԷՆ, Արիստ. Տատ ցում ենք, որ անբարեխղճութեան զոհ ենք դարձել ձեր լիշտ դէպքում, թէ եւ զիտաւոր փառաք, ինչպէս դուք վկայում էք, ճիշդ է Յամենայն դէպս, մենք միշտ հարատւորութիւն ենք տալիս ամեն մէկին արդարանալու նոյն իսկ մեր լրագրի մէջ:

ԵՋՄԻՍՏԻՆ, Երեկ վարդապետ. Ձեր հերքումը արդէն տպված էր, երբ ցինդրական Կօփտոնից ստացանք նրա պատճենը: Աս տեղեկութիւնը հարկատը ենք համարում հարորդել ձեզ, որպէս զի հասկանաք, եթէ կարող էք, թէ ինչ տարբերութիւն կայ ձեր եւ մեր մէջ:

ԽԱՐԱԳՐՈՒՄ ԱՆԷՔՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍՏԱԿԱ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴԿՈՎԱՍՏԱՆ ԵՐԿԱՍՈՒՂԻ (ժամերը Պետրոպոլից հաշուով) ամբողջութիւնը 58 թալէ:

№ 5 գնացրը: № 3 գնացրը: Բարոյից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 1 ր. գիշ. 11 ժ. 29 ր. Թիֆլիսի է համարում. առ. 8 » 53 » կր. 5 » 34 » Թիֆլիսից դուրս է գալիս » 9 » 32 » կր. 6 » 34 » Բաթում է համարում. կր. 9 » 1 » առ. 7 » 14 »

